

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԻՄԵՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ  
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2014 Թ. 1-ԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ  
Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հաշվետվությանը ներկա էր մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի տեղակալ պարոն Ա. Հովհաննիսյանը, գյուղապետարանի աշխատակազմը, ավագանին և համայնքի բնակիչներ:

Ամփոփելով Արմավիրի մարզի Արտիմետի գյուղական համայնքի 2014 թվականի 1-ին կիսամյակի կատարած աշխատանքները պարզվել է՝

Ֆինանսական.

Նախատեսված է եղել հողի հարկ	- 10100.0դ	հավաքվել է	- 1163.5 դ
Գույքահարկ	- 4281.0 դ	հավաքվել է	- 1097.4 դ.
Տույժեր	-	գանձվել է	- 111.5 դ
Վարձակալական հողի վճար	- 322.3դ	հավաքվել է	- 156.2 դ
Համահարթեցում	- 23498.0		- 11749.0 դ
Աղբահանություն	- 1164.0	վճարվել է	- 582.0 դ

Աղբահանությունը կատարվում է շրջիկ տրակտորի միջոցով շաբաթը երկու անգամ, շրջելով փողոցները մաքրվում է ջրատար առուները և բնակչության կողմից կուտակված շինարարական աղբը:

Կառավարության կողմից հատկացված ազոտական պարատանյութը 69տ., 1380 պարկ յուրաքանրյուր պարկը 6000 դրամ, ֆոսֆորական պարարտանյութը 1500 կգ. յուրաքանրյուր պարկը 7000 դրամ և 19610 լիտր դիզ. վառելիքը 1-լիտրը 350 դրամ ժամանակին ստացվել է և բաշխվել հողօգտագործողներին:

Արտիմետ համայնքում նախկինում գործող վթարային խորքային 2 հորերը, որոնք շահագործման ենթակա չէին, կոնսերվացվել է, Տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի «Ջրային տնտեսության ԾԻԳ» Պ Հ -ի կողմից:

Գյուղապետարանը և նրա ենթակա կառույցները աշխատավարձի և սոցիալական վճարների պարտքեր չունեն:

Համայնքի բնակիչները իրենց ձմեռային առօրյան անցկացնում են գյուղապետարանի շենքի ջեռուցվող դահլիճում՝ զբաղվելով նարդի, շախմատ, շաշկի խաղերով, նույնիսկ կազմակերպվում է շախմատի առաջնություն հարևան գյուղերի հետ:

Համայնքում կատարվել է աշնանացան 131 հա հացահատիկ: Գարնանը ցանվել է 6 հա գարնանացան գարի, 64հա կարտոֆիլ, 155 հա բոստանային կուլտուրա / ձմերուկ / , 17 հա լոլիկ , 12հա վարունգ, 2 հա ծաղկակաղամբ, 1 հա սմբուկ և 83 հա այլ բանջարեղեն:

Համայնքը ցրտահարությունից չի տուժել , 2014 թվականին սպասվում է միջին բերք, կապված անբարենպաստ եղանակի հետ:

Համայնքի հիմնախնդիրներն են՝

1. Մանկապարտեզի վերանորոգում
2. Միջհամայնքային ճանապարհի ասֆալտապատում
3. Գյուղամիջյան ճանապարհների հարթեցում:



Համայնքի ղեկավար՝ *M. Guliyev* Զ. Միրզախանյան